



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

HEAD OF STAFF

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
Էլ. փոստ /E-mail/ эл. почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
☎ (374 11) 818 506

№ _____

<< >> _____ 2015թ.

Ալավերդու <<Օրիուս>> կենտրոնի համակարգող
տիկին Ա. Էվոյանին

Հարգելի տիկին Էվոյան

Ի պատասխան Ձեր 2015 թվականի հուլիսի 27-ի գրության, ՀՀ բնապահպանության նախարարությունը ներկայացնում է ՀՀ բնապահպանության նախարար Ա. Գրիգորյանի սույն թվականի հուլիսի 14-ի ՀՀ Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի վերաբերյալ տեղեկատվություն.

1. Ալավերդու քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ քննարկվել են <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) շրջանակներում 2014թ. տրամադրված սուբվենցիաների միջոցով իրականացված բնապահպանական ծրագրային միջոցառումների արդյունքները, 2015թ. նախատեսված ծրագրերի իրականացման ընթացքը և ՀՀ Լոռու մարզի բնապահպանական հիմնախնդիրները (2014-2016թթ. ընթացքում Լոռու մարզի ազդակիր համայնքներին հատկացված (հատկացվելիք) սուբվենցիաների և համապատասխան բնապահպանական ծրագրերի իրականացման վերաբերյալ տեղեկանքները կցվում են):

Համաձայն <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի՝ ներկայում ՀՀ Լոռու մարզի խոշոր լեռնամետալուրգիական ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարներից սուբվենցիա ստանալու իրավունք ունի ազդակիր 8 համայնք:

Նշված օրենքի շրջանակներում կատարված հաշվարկների համաձայն՝ 2016 թ. համար համապատասխան հաշվարկված սուբվենցիայի գումարներ ունեն ՀՀ Լոռու մարզի միայն Ախթալա և Օձուն համայնքները: Այդ համայնքների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները համաձայնեցվել են ՀՀ բնապահպանության նախարարի հետ:



2. Խորհրդակցության ընթացքում քննարկվել են նաև ազդակիր համայնքների ցանկի ընդլայնման, տրամադրվող սուբվենցիաների չափերի, դրանց բաշխման համամասնությունների և խոշոր աղտոտող այլ ընկերությունների (այդ թվում «Թեղուտ», «Սագամար» ՓԲԸ-ների) Օրենքի 1-ին հոդվածում ընդգրկելու հետ կապված հիմնահարցերը:

3. Ներկայում շահագրգիռ պետական մարմինների հետ համաձայնեցման փուլում է գտնվում «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ համաձայն որի հիմնականում նախատեսվում է՝

- ընդլայնվել է օրենքի 1-ին հոդվածում ընդգրկված ընկերությունների ցանկը,
- ընդլայնել մասհանումներ կատարվող վճարների շրջանակը և այնտեղ ներառել նաև ընդերքօգտագործման համար վճարվող բնօգտագործման վճարները:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ



Խ.Աղաբեկյան

<<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> ՀՀ օրենքի համաձայն 2014-2015թթ. ընթացքում Լոռու մարզի ազդակիր համայնքներին հատկացված /հատկացվելիք/ սուբվենցիաների և համապատասխան բնապահպանական ծրագրերի վերաբերյալ

Մարզի, համայնքի անվանումը	2014 թ. բնապահպանական ծրագրով իրականացված միջոցառումների	Գումարը /հազ. դրամ/	2015թ. բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների	Գումարը /հազ. դրամ/
	Անվանումը		Անվանումը	
ՀՀ Լոռու մարզ		216688.4		150509.6
	Ընդամենը ք. Ալավերդի	114590.2		94677.0
	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	<i>79983.2</i>	<i>Բնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	<i>66273.9</i>
	1. Ալավերդի համայնքի Էնգելս թաղամասում գտնվող զբոսայգու նորոգում	36788.9	1. Ալավերդի ուստայքի Էսգելս թաղամասում գտնվող զբոսայգու տարածքի հիմնանորոգում /ծրագրի 2-րդ փուլ/	31214.0
	2. Ալավերդի համայնքի մշակույթի պալատի հրապարակներձ տարածքի բարեկարգում և կանաչապատում	3499.1	2. Ալավերդի համայնքի Ակներ գյուղական թաղամասի ջրամատակարարման ցանցի կառուցում	24424.0
	3. Ալավերդի համայնքի Սանահին Սարահարթ թաղամասում արհեստական խոտածածկույթի և խաղահրապարակի կառուցում	14536.0	3. Ալավերդի համայնքի Չորավար Անդրանիկ փողոցի կոյուղագծի կառուցում	5572.0
	4. Ալավերդի համայնքի Սանահին կայարան թաղամասում արհեստական խոտածածկույթի և խաղահրապարակի կառուցում փողոցներում աղբարկղերի տեղադրում	12447.9	4. Ալավերդի համայնքում կանաչապատ տարածքների վերականգնում և ընդլայնում	1263.9
	5. Ալավերդի համայնքի կոշտ կենցաղային թափոնների աղբարկղերի ձեռքբերում	9641.3	5. Ալավերդի համայնքի տարածքում գտնվող վտանգավոր թափոնների /մկնդեղի/ գերեզմանոցի բնապահպանական ռիսկերի գնահատում և անվտանգությունն ապահովող միջոցառումների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակում	2500.0
	6. Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	3070.0	6. Նախագծա-նախահաշվային աշխատանքներ	1300.0
	Առողջապահական միջոցառումներ՝	34607.0	Առողջապահական միջոցառումներ	28403.1

ք. Ախթալա	Ընդամենը ք. Ախթալա	4342.1		0.0
	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i> 1. Ախթալա ուսումնական կենտրոնի փողոցի արտոստապաս խոտածածկով մարզահրապարակի կառուցման առիթամբ	3150.0	<i>Քնապահպանական միջոցառումներ</i>	0.0
	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	1192.1	<i>Առողջապահական միջոցառումներ</i>	0.0
գ. Աբրրի	Ընդամենը գ.Աբրրի	29989.5		20862.2
	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	19993.5	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	16812.2
	1.Համայնքի 1-ին փողոցի փոսային նորոգում	4916.348	1. Համայնքի 5-րդ փողոցի ասֆալտապատում	16812.2
	2.Համայնքի 8-րդ փողոցի ճանապարհի նորոգում	2079.958		
	3. Համայնքի 2-րդ և 3-րդ փողոցների ասֆալտապատում	12997.178		
<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	9996.0	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	4050.0	
գ.Հաղպատ	Ընդամենը գ.Հաղպատ	25838.2		27470.6
	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	18244.3	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	19229.4
	1. Հաղպատ համայնքի համար կոշտ կենցաղային թափոնների աղբարկղերի ձեռքբերում	1980.0	1. Խմելու ջրագծի և ներքին ցանցի կառուցում /ներառյալ նախագծի պատվիրում և տեխնիկոլոգյուն/	18129.4
	2. Հաղպատ համայնքի աղբահանության կազմակերպում և տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող լիցենզավորված աղբավայր	870.0	2. Հաղպատ համայնքի աղբահանության կազմակերպում և տեղափոխում Ալավերդի համայնքի ենթակայության տակ գտնվող լիցենզավորված աղբավայր	1100.0
	3. Հաղպատ համայնքի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում	15394.3		
<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	7593.9	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	8241.2	
գ.Օձուն	Ընդամենը գ.Օձուն	11935.7		7499.8
	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	6996.7	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	0.0
	1.Համայնքի 14-րդ փողոցի և 14-րդ փողոցի 1-ին նրբանցքի 597.8մ երկարությամբ կոյուղագծի կառուցման աշխատանքներ	6996.7		
<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	4939.03	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	7499.8	
գ. Հազվի	Ընդամենը գ.Հազվի	29992.7		0.0
	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	24997.5	<i>Քնապահպանական միջոցառումներ՝ այդ թվում</i>	0.0
	1.Գյուղամիջյան ճանապարհների փոսային վերանորոգում և ասֆալտապատում	24997.5		
<i>Առողջապահական միջոցառումներ</i>	4995.3	<i>Առողջապահական միջոցառումներ՝</i>	0.0	

ՏԵՂԵԿԱՆՔ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն 2014-2016թթ. ընթացքում Լոռու մարզի ազդակիր համայնքներին հատկացված /հատկացվելիք/ սուբվենցիաների վերաբերյալ

հազ. դրամ

	Համայնքի անվանումը	2014թ. փաստացի տրամադրված սուբվենցիայի գումարը	2015թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված սուբվենցիայի գումարը	2016թ. համար հաշվարկված սուբվենցիայի գումարը
Ընդամենը ՀՀ Լոռու մարզ		216,688.4	150,509.6	52,648.1
1	ք. Ալավերդի	114590.2	94677.0	0.0
2	ք. Ախթալա	4342.1	0.0	4,729.7
3	գ. Աքրոի	29989.5	20862.2	0.0
4	գ. Հաղպատ	25838.2	27470.6	0.0
5	գ. Օձուն	11935.7	7499.8	47,918.4
6	գ. Հազվի	29992.7	0.0	0.0
7	ք. Շամլուղ	0.0	0.0	0.0
8	գ. Մեծ Այրում	0.0	0.0	0.0

2016 թվականի ՀՀ Լոռու մարզի ազդակիր համայնքների միջև բնապահպանական վճարի գումարի բաշխման համամասնությունները սահմանելիս հաշվի է առնվել ՀՀ Լոռու մարզպետարանի դիրքորոշումը:

Օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար <<Արմենիա Քափր Փրոգրամ>> ՓԲԸ բնապահպանական վճարների համամասնությունները Լոռու մարզի ազդակիր համայնքների միջև բաշխվում են՝ հիմք ընդունելով աղտոտվածության ծավալները և բնակչության թվաքանակը (Ալավերդի՝ 13927 մարդ, Աքրոի՝ 2712 մարդ, Հաղպատ՝ 787 մարդ, Օձուն՝ 5311 մարդ, Հազվի՝ 508 մարդ):